

ԻԳՈՐ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ ԴՅԱԿՈՆՈՎ

Արևելագիտությունը ծանր կորուստ կրեց. 1999 թ. մայիսի 2-ին կյանքից հեռացավ ականավոր գիտնական, պատմաբան, բանասեր, լեզվաբան Իգոր Միխայլովիչ Դյակոնովը:

Ի. Դյակոնովը ծնվել է 1915 թ. հունվարի 12-ին, Պետերբուրգում, մտավորականի ընտանիքում: Նրա մանկությունը և պատանեկությունը մեծ մասամբ անցել են Նորվեգիայում, որտեղ հայրը Խորհրդային Ռուսաստանի, իսկ ապա Խորհրդային Միության առևտրական ներկայացուցիչն էր: 1932-1936 թթ. ուսանել է Լենինգրադի պատմա-լեզվա-փիլիսոփայական ինստիտուտի նախ պատմական, իսկ ապա լեզվաբանական բաժնում: Ինստիտուտն ավարտելուց հետո Ի. Դյակոնովը աշխատանքի է անցնում Պետական Էրմիտաժի Հին Արևելքի բաժնում: Աշխատանքն ընդմիջվեց Հայրենական պատերազմի ժամանակ, որի ընթացքում նա թարգմանիչ էր Կարելյան ռազմաճակատում: Պատերազմից հետո նա վերսկսեց իր աշխատանքը Էրմիտաժում, զուգակցելով այն մանկավարժական գործունեության հետ Լենինգրադի համալսարանում, իսկ հետագայում տեղափոխվեց ԽՍՀՄ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքը, որտեղ աշխատեց մինչև կյանքի վերջին տարիները:

Ի. Դյակոնովի գիտական գործունեության ոլորտը թե՛ ժամանակագրական (մ.թ.ա. III հազարամյակից մինչև մեր թվականությունը) և տարածական (ամբողջ Առաջավոր Ասիան) և թե՛ թեմատիկ առումով (պատմություն, բանասիրություն, լեզվաբանություն, իրավագիտություն, աղբյուրագիտություն, դիցաբանություն, սոցիալական հոգեբանություն և

այլն), այնքան լայն է, որ դրանք թվարկելիս անգամ անխուսափելի են բացթողումները: Ի. Դյակոնովի գրեթե բոլոր աշխատությունները սեղանի գիրք են հինարևելագիտական ամենատարբեր ուղղությունների մասնագետների համար: Այդպիսին է, մասնավորապես, «Языки древней Передней Азии» (1967) գիրքը, որում շարադրված են հին Առաջավոր Ասիայի բոլոր ոչ հնդեվրոպական լեզուների քերականությունները:

Վաստակաշատ գիտնականն իր լեզվագիտական աշխատություններում արծարծել է Հին Արևելքի լեզուների տիպաբանության, ինչպես նաև ծագումնաբանության խնդիրները, առաջ քաշելով այդ լեզուների ծագման մասին վարկածներ, որոնք հետագայում հաստատվեցին այլ մասնագետների հետազոտություններով: Ի. Դյակոնովի աշխատանքի արդյունքն է լեզվաբանության մեջ նոր ուղղության՝ համեմատական խուռի-ուրարտագիտության ստեղծումը: Նշանակալի է նրա ավանդը սեմա-քամյան (աֆրասիական) լեզուների դասակարգման գործում, որն իր արտահայտությունն է գտել «Afrasian Languages» (1988) գրքում և իր մասնակցությամբ ու խմբագրությամբ կազմված աֆրասիական լեզուների համեմատական բառարանի պրակներում: Ի. Դյակոնովի ուշադրությունից չեն վրիպել նաև դրի առաջացման խնդիրները Միջագետքում: Ուշագրավ է նրա կողմից առաջ քաշած թեզը ուրարտական սեպագրի խուռի-խեթական ակունքների մասին, ինչպես նաև այն դրույթը, որ աքեմենյան սեպագիրը մեդական ծագում ունի:

Որքան էլ որ նշանակալի և կարևոր լինեն Ի. Դյակոնովի տարբեր բնագավառներում կատարած հետազոտությունները, նա, ինչպես որ ինքն էր հաճախ կրկնում, նախ և առաջ պատմաբան էր և իր ստեղծագործության արդյունքները վերջին հաշվով ծառայեցնում էր պատմական իրողության և պրոցեսների ճանաչմանը: Ի. Դյակոնովի փայլուն էրուդիցիան, խորաթափանց հայացքը և սինթեզելու բացառիկ կարողությունը թույլ էին տալիս նրան օրինաչափություններ տեսնել և պատմական պատկերը վերականգնել առաջին հայացքից ցաք ու ցրիվ փաստերի ետևում: Նրա այդ տաղանդը առավել ցայտուն կերպով դրսևորվեց "Предыстория армянского народа" (1968) գրքում: Իր այդ աշխատության մեջ նա ցույց տվեց, որ հայ ժողովրդի բնօրրանը Հայկական լեռնաշխարհն է, որը խուռի-ուրարտական, խեթա-լուվական, հայկական և այլ հնդեվրոպական ցեղերի յուրատեսակ մի խառնարան էր: Ի. Դյակոնովի ստեղծագործության մեջ կարևորագույն տեղ են գրավում հինարևելյան հասարակությունների կառուցվածքի և սոցիալ-տնտեսական կացության հարցերը: Այդ խնդիրներին են նվիրված "Земельные отношения в Ассирии" (1949), "Общественный и государственный строй древнего Двуречья. Шумер" (1959) գրքերը և մի շարք հիմնարար հոդվածներ: Տարիների ընթացքում ձևավորվում և բյուրեղանում է Ի. Դյակոնովի հին աշխարհի պատմության այն կոնցեպցիան, որով մերժվում է այսպես կոչված «ար-

տագրության ասիական եղանակը» և չեշտվում է արտագրության միասնական եղանակի գոյությունը հին աշխարհում:

Ի. Դյակոնովը օժտված էր ոչ միայն մեծ հետազոտողի, այլև բանաստեղծի տաղանդով, որի հավաստումն են հինարևելյան գրականության գոհարների «Գիլգամեշ» բաբելոնյան էպոսի, եբրայական «Երգ երգոց»-ի և «Ժողովողի գրքի» բանաստեղծական թարգմանությունները:

Ի. Դյակոնովը ոչ միայն գիտնական էր, այլև գիտության փայլուն կազմակերպիչ: Նրա ղեկավարությամբ և գործուն մասնակցությամբ ստեղծվել են բազմաթիվ կոլեկտիվ աշխատություններ. "Законы Вавилонии, Ассирии и Хеттского царства" (1952), "История древнего мира" (I–III, 1982), "История древнего Востока" (մաս I, 1983), "История древнего Востока" մատենաշարը, Երևանում հրատարակվող "Древний Восток" պարբերական ժողովածուն և շատ ուրիշներ:

Անգնահատելի է Ի. Դյակոնովի ավանդը մասնագետների պատրաստման գործում: Ուսուցչի նրա տաղանդը դրսևորվեց դեռ երիտասարդ տարիներին: Դրա արդյունքն է խորհրդային հինարևելագիտական դպրոցի ստեղծումը, որի ներկայացուցիչները աշխատում են նախկին Խորհրդային Միության հինարևելագիտական բոլոր կենտրոններում, ինչպես նաև գրսում: Ի. Դյակոնովի հիշատակի առաջ մեծապես պարտավորված է նաև հինարևելյան քաղաքակրթությունն ուսումնասիրող հայկական դպրոցը՝ անմիջականորեն կամ նրա աշակերտ ակադ. Դաղիկ Սաքգսյանի միջնորդավորմամբ: Ի. Դյակոնովին իրենց ուսուցիչն են համարում նաև շատ գիտնականներ, որոնց բախտ չի վիճակվել անմիջականորեն աշակերտելու նրան:

Ականավոր գիտնականի, բազմատաղանդ, ազնվագույն, հազվագյուտ հմայքի տեր մարդու լուսավոր կերպարը միշտ վառ կմնա նրա գործընկերների, աշակերտների և բոլոր ճանաչողների սրտերում:

Մ. Լ. ԽԱՉԻԿՅԱՆ

«Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրությունը խորապես վշտացած է հին լեզուների և քաղաքակրթությունների խոշորագույն հետազոտող պրոֆ. Ի. Մ. Դյակոնովի մահվամբ: Հանգուցյալը մեր վաղեմի աշխատակցողն էր և ակադ. Մ. Գ. Ներսիսյանի գնահատված բարեկամը:

ՊԲՀ-ի խմբ. խորհուրդ